Հ. Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՇՈՒՐՋ

(1890—1917)

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՑԱՆ

Հայ պատմագիտությունը տարբեր առիթներով անդրադարձել է դաշնակցական կուսակցության գործունեությանը և հայտնել տարբեր, հաճախ տրամագծորեն հակառակ կարծիքներ։ Դաշնակցական պատմաբանները սովորաբար գրական են ներկայացնում իրենց կուսակցության գործունեությունը, երբեմն նշելով նրա սխալներն ու վրիպումները, իսկ խորհրդահայ պատմաբանները միայն սևացնում են այն, չտեսնելով նրա մեջ որևէ լավ բան։ Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանում դաշնակցության գնահատումը դրված էր պաշտոնական հիմքի վրա, սահմանվել էին որոշակի նորմեր, որոնց խախտումը դիտվում էր որպես հակակոմունիստական կամ հակապետական երևույթ և պատժվում։ Ստեղծվել էր այնպիսի մի կարգավիճակ, երբ չէր կարելի որևէ բան հրատարակել հայ հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժումների մասին, առանց դաշնակցության հասցեին թունդ խոսքեր ասելու։ Չարաշահելով այդ հանգամանքը, ոմանք հաշվեհարդար էին տեսնում իրենց անձնական կամ գիտական հակառակորդների հետ։ Մյուսները, շարարկելով այդ իրավիճակը, դաշնակցության քննադատությունը, ավելի ճիշտ վարկաբեկումը դարձրել էին իրենց պատվախնդրությունը բավարարելու միջոց և, ոտնատակ տալով բարեխղճությունն ու ճշմարտությունը, այդ կուսակցության մասին հատուկ գրքեր էին գրում, նրա գործունեության մեջ չտեսնելով գոնե մի լուսավոր էջ։

Մեր օրերում, երբ արժեքների վերարժեքավորումը թափանցել է նաև գիտության բնագավառը, անհրաժեշտ է վերանայել անցյալի նորմերը և օբյեկտիվորեն վերլուծել պատմական երևույթները։ Այդ տեսանկյունից պետք է անդրադառնալ նաև դաշնակցության գործունեությանը։ Ասվածի լույսի ներքո փորձենք համառոտակի քննել այդ կուսակցության քաղաքական կողմնորոշման հարցը՝ 1890—1917 թթ. ժամանակահատվածում։

Դաշնակցությունն իր «Մանիֆեստում», որը 1890 թ. լույս տեսավ նրա օրգան «Դրոշակում», հայտարարում էր, թե հայը «համոզվելով, որ օտարի վրա դրած հույսը ցնորք է, վճռել է իր ձեռքով պաշտպանել իր իրավունքները, իր կյանքը, իր պատիվը, ընտանիքը»։ «Այսօր նա վճռել է կամ մեռնել, կամ ազատվել»։ Նա այլևս ազատություն չի խնդրում, այլ պահանջում է, և «պահանջում է զենքը ձեռքին»[1]։ Բայց տեսնելով, որ սեփական ուժերով անհնար է հասնել նպատակին, դիմում է եվրոպական տերությունների աջակցությանը։ Ինչո՞ւ հենց այդ տերությունների։ Այն պատճառով, որ 1878 թ. Բեռլինի կոնգրեսով նրանք էին իրենց վրա վերցրել Հայկական հարցի լուծման պարտականությունը։ Անշուշտ, դաշնակցությունը տեսնում էր խնդրի հակասական էությունը, նկատելով, մի կողմից, որ «մեր նյութապաշտ դարում դիպլոմատները ղեկավարվում են սեփական շահերով և ավելի ուժեղի իրավունքներով»[2], իսկ մյուս կողմից՝ հայտարարում էր, որ առանց դիվա-

---

[1] Դրոշակ, 1890, № 1, էջ 2։

[2] Նույն տեղում, 1891, № 1, էջ 1։

նագիտության միջամտության «Հայկական հարցը չի կարող որոշակի ելք ստանալ գործի ասպարեզում՝ Տաճկահայաստանում»[3]։

1899—1900 թթ. դաշնակցության ղեկավարներից մեկը՝ Քր. Միքայելյանը, հանդես եկավ «Ամբոխային տրամաբանություն» հոդվածաշարով, որի մեջ գրում էր. «Հայկական կյանքը վաղուց եկել կանգ է առել մի խոշոր դիլեմայի առաջ—կամ անպայման ջնջում իբրև մի ամբողջություն, իբրև մի ազգություն, իբրև մի հայրենիքի տեր ժողովուրդ, կամ դիմադրություն, կյանք, պատիվ, ստացվածք, տուն, հայրենիք, ամեն ինչ բռնաբարող ուժի դեմ»[4]։ Նա ելքը տեսնում էր նախ՝ արևմտահայության ընդհանուր ապստամբության մեջ, նշելով, որ այն կառաջանա ոչ թե հանգիստ նստելով ու սպասելով, այլ ակտիվ գործողություններով, ցույցեր, արշավանքներ կազմակերպելով, խմբակային կռիվներ վարելով, ընդ որում, ըստ նրա, այդ ամենը ավելի արդյունավոր կլիներ, եթե կազմակերպվեր մայրաքաղաքում։ «Մի ատրճանակի պայթյունը,—գրում էր հեղինակը,—այստեղ ավելի է լսելի աշխարհին, քան տասնյակ հրացանների որոտը երկրի խորքում»[5], բանի որ Կ. Պոլսում նստած օտարերկրյա դեսպաններն ականատես կլինեն իրողություններին, կհաղորդեն իրենց տերություններին, որոնք և կձեռնարկեն կոնկրետ միջոցառումներ։ Երկրորդ, Քր. Միքայելյանն արևմտահայության ազատագրության ելքը տեսնում էր մեծ տերությունների միջամտության մեջ։ Նա պահանջում էր վարել տևական կռիվներ, ստեղծել հեղափոխական կացություն, «միշտ ունենալով աչքի առաջ երրորդ ազդակի միջամտությունը... եվրոպական ազդակի»[6]։ Նրա կարծիքով, Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում հայկական ելույթներն իրենց վրա կհրավիրեն մեծ տերությունների ուշադրությունը, նրանց կստիպեն միջամտելու Օսմանյան կայսրության ներքին գործերին և լուծելու Հայկական հարցը։ Եվ միայն այն օրը, երբ այդ տերությունները կհամոզվեն, որ հայկական վերքի բուժման համար պետք է դիմել գործնական քայլերի, «մեր դատը ապահովված կլինի։ Այդ օրը կլինի մեր հաջողության օրը»[7]։

Դաշնակցությունը շարունակում էր Հայկական հարցի լուծումը եվրոպական պետությունների հետ կապել նաև XX դ. սկզբին։ Այսպես, 1905 թ., երբ նրանք սկսեցին զբաղվել մակեդոնական հարցով, կուսակցությունը նույն թվի նոյեմբերի 29-ին հեռագրեց մեծ տերություններին, որ հայ ժողովրդի դատը «մակեդոնականեն անբաժան է... լուծելով մակեդոնականը, պետք է լուծել նաև հայկականը»[8]։ Միաժամանակ նա ահազանգում էր, որ սուլթանական կառավարությունը պատրաստվում է Տարոնում ու Վասպուրականում իրագործել հայկական նոր ջարդեր և խնդրում էր, որ կանխեն դրանք։ Սակայն տեսնելով մեծ տերությունների անտարբերությունը, դաշնակցությունը հուսալքվում էր ու քննադատում նրանց։ 1902 թ. «Դրոշակը» իր առաջնորդողներից մեկում գրում էր, որ մենք գուրգուրեցինք Եվրոպային, «երկրպագեցինք, բայց նա մեզ դավաճանեց»[9]։

Հիասթափվելով պաշտոնական Եվրոպայից, կուսակցությունը Հայկական հարցի լուծման համար սկսեց դիմել Եվրոպայի առաջադեմ դեմոկրատական հասարակայնությանը։ 1898 թ. նրա ընդհանուր ժողովը որոշեց «ուժ տալ արտասահմանյան պրոպագանդային, ստեղծել Արևմուտքում հայասիրական ծավալուն շարժում մը՝ քաղաքական շրջաններուն վրա ազդելու հա-

---

3 Դիվան ՀՀ դաշնակցության, հ. 1, Բոստոն, 1934, էջ 255

4 Դրոշակ, 1899, № 8, էջ 117։

5 Նույն տեղում, 1900, № 2, էջ 18։

6 Դրոշակ, 1900, № 4, էջ 52։

7 Նույն տեղում։

8 Լուսաբեր, 1905, № 155

9 Դրոշակ, 1902, № 7, էջ 97։

մարդ»[10]։ Շուտով Քր. Միքայելյանն ուղևորվեց Ժնև և, ծավալելով եռանդուն գործունեություն, Եվրոպայի նշանավոր մտավորականությանը կոչ արեց հանդես գալ հայամետ ելույթներով։ Հետո նա մեկնեց Փարիզ և հիմնեց «Պրո Արմենիա» ֆրանսերեն թերթը։ Եվրոպայի նշանավոր դեմքերից շատերը՝ Անատոլ Ֆրանսը, Կլեմանսոն, Ֆ. դը Պրեսանսեն, Ժան Ժորեսը, Պ. Քիյարը, Հոլլեն Ժեքմենը, Է. Դիլոնը, Յո. Լեփսիուսը, Գրինը, Ջ. Բրայսը, Մակ-Կոլը և ուրիշներ արձագանքեցին դաշնակցության ղեկավարի կոչին ու «Պրո Արմենիայում» լույս ընծայեցին հայանպաստ մի շարք հոդվածներ։ Նրանք խարազանում էին օսմանյան արյունոտ լուծը, քննադատում էին իմպերիալիստական պետությունների շահամոլ քաղաքականությունը և պահանջում անհապաղ լուծել Հայկական հարցը, բարելավել արևմտահայության վիճակը։ Ոգևորվելով հայասիրական շարժման ծավալումով, 1902 թ. «Դրոշակը» գրում էր. «Այժմ մի երկրորդ կուռք ստեղծելու վրա ենք... կռվի և արյան դաշտից դուրս գտնվող մեր հասարակությունն այժմ, կարծեք, տրամագիր է հավատալ, որ միջազգային հայասեր շարժումը մի պանասե է, մի «հմամադարման» հայի վերքին, մի նոր պաշտամունք... մի երկրորդ կուռք, որ անհունապես ավելի մաքուր է, քան առաջինը...»[11]։

Սակայն հայասերները, որքան էլ գործեցին մեծ եռանդով, չհասան իրենց նպատակին, որովհետև նրանց ձեռքին միայն խոսքն էր, իսկ նյութական ու ռազմական ուժը գտնվում էր մեծ տերությունների ձեռքում։

Այն ժամանակ, երբ դաշնակցությունը Եվրոպային էր դիմում Հայկական հարցի լուծման համար, թուրքական պաշտոնական շրջաններն ու քաղաքական կազմակերպությունները փորձեցին նրան գրավել իրենց կողմը և ծառայեցնել իրենց նպատակներին։ Սուլթան Աբդուլ Համիդ II-ը կոտորածներից հետո համաշխարհային առաջադեմ հասարակայնությանը հանգստացնելու և հայ քաղաքական շրջաններին խաբելու համար բանակցություններ սկսեց հայ կուսակցությունների, այդ թվում նաև դաշնակցության հետ[12]։ 1896 թ. օգոստոսին նա պատվիրակություն ուղարկեց Ժնև և դաշնակցության ղեկավարներին առաջարկեց դադարեցնել «հարձակողական գործողությունները», խոստանալով, որ 9 ամիս հետո բարենորոգումներ կմտցնի կայսրությունում, որոնք կտարածվեն նաև հայերի վրա[13]։ Կուսակցության ղեկավարները պատասխանեցին, թե հենց որ սուլթանը անց կացնի բարենորոգումներ և ժողովուրդը գոհ մնա, այն ժամանակ իրենք կկատարեն նրա կամքը[14]։

Աբդուլ Համիդը 1896 թ. դեկտեմբերի 10-ին ներում հայտարարեց հայ քաղաքական բանտարկյալներին, ազատ արձակեց 1200 ձերբակալվածների և 100 մահապարտների դատավճիռը փոխեց ցմահ բանտարկության։ 1897 թ. փետրվարի 4-ին սուլթանի պատվիրակները դաշնակցության ղեկավարներին հայտնեցին այդ մասին։ Սակայն վերջիններս պատասխանեցին, որ դա խիստ անբավարար է, անհրաժեշտ է բարելավել կայսրության ողջ հայության դրությունը։ Աբդուլ Համիդը, ստանալով այդ պատասխանը, դադարեցրեց բանակցությունները։ Բայց 1897 թ. ամռանը, երբ իմացավ դաշնակցության խանասորի արշավանքի լուրը, վերսկսեց դրանք, կրկին խոստանալով, որ կկենսագործի հայոց բարենորոգումները։ Երբ կուսակցության ղեկավարները չհավատացին սուլթանի խոսքերին, այն ժամանակ նա հարցում արեց, թե

10 Մ. Վարանդյան, Հայ հեղափոխական դաշնակցության պատմություն, հ. Ա, Փարիզ, 1932, էջ 202։

11 Դրոշակ, 1902, № 7, էջ 97։

12 Այդ բանակցությունների մասին հանդամանորեն տե՛ս Դրոշակ, 1898, № 2, 5, 1899, № 2, 4, 6, Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 191 և հետո, Հայրենիք, 1938, № 3, Мери Кочар, Армяно-турецкие отношения и Армянский вопрос в конце XIX—начале XX веков, Ереван, 1988, с. 41—52.

13 Դրոշակ, 1899, № 4, էջ 59։

14 Հայրենիք, 1938, № 3, էջ 33։

ինչ բարենորոգումներ են պահանջում։ Դաշնակցության ղեկավարներն ուղարկեցին իրենց կուսակցության ծրագիրը և արևմտահայության կյանքի վերակառուցման մասին այլ փաստաթղթերը։ Աբդուլ Համիդը փորձեց մանր-մունր ձեռնարկումներով խաբել դաշնակցությանը։ Բայց կուսակցության ղեկավարները 1898 թ. հավաքվելով խորհրդակցության, ավելի կոնկրետ ներկայացրին իրենց պահանջները, այն է՝ ապահովել փախստական հայերի վերադարձը հայրենիք և օգնել նրանց, որ վերականգնեն իրենց տնտեսությունները, վերադարձնել հայերից բռնագրաված անշարժ գույքը, ազատել քաղաքական բոլոր բանտարկյալներին, օրենքի ամբողջ խստությամբ պատժել Բիթլիսի ու Ախլաթի գյուղերն ավերողներին ու հատուցել նրանց վնասը և այլն[15]։ Այդ առաջարկությունների կատարման վերջնական ժամկետը նշանակվեց 1899 թ. մարտի 11-ը։ Երբ ժամկետն անցավ և պատասխան չստացվեց, մարտի 16-ին դաշնակցության ղեկավարները հայտարարեցին, որ դադարեցնում են բանակցությունները։ Սուլթանի ներկայացուցչի այն խորհրդին, որ նրանք թերևս շարունակեն դրանք, դաշնակցականները, ինչպես նշում է Կ. Պոլսի ռուսական դեսպան Ի. Ա. Զինովևը, պատասխանեցին «շարախինդ ծիծաղով»[16]։

Բացի սուլթանից, դաշնակցության հետ բանակցության ու համագործակցության փորձեր կատարեցին նաև երիտթուրքական ղեկավարները։ Անշուշտ, նրանք ատելությամբ էին լցված հայկական աղատադրական շարժումների հանդեպ, զայրույթով էին խոսում նրանց մասին, հայտարարելով, թե հայերն ուզում են քայքայել կայսրությունը, նույնիսկ արդարացնում էին բռնակալի ձեռնարկած ջարդերը, բայց Աբդուլ Համիդին տապալելու և 1876 թ. սահմանադրությունը վերականգնելու համար ձգտում էին օգտագործել Թուրքիայի ընդդիմադիր ուժերին, այդ թվում նաև հայ քաղաքական կուսակցություններին։ Երիտթուրքերի պարագլուխները՝ Ահմեդ Ռիզա Բեյը և Հիլմի Թունալը 1895—1896 թթ. ծնևում մի քանի անգամ այցելեցին «Դրոշակի» խմբագրություն, դաշնակցության ղեկավարներին առաջարկեցին հրաժարվել իրենց ծրագրից ու պայքարել միդհատյան սահմանադրության համար։ Սակայն դաշնակցականները մերժեցին։ Հետագայում երիտթուրքերը սկսեցին ավելի խստորեն քննադատել սուլթանին, նրան համարելով կայսրության դժբախտությունների հիմնական պատճառը, հայկական կոտորածների գլխավոր նախաձեռնողը և խնդիր դրեցին նրան տապալել հեղափոխական ճանապարհով։ Միաժամանակ նրանք շարունակեցին բանակցությունները դաշնակցության հետ։ Երիտթուրքերի այդ ընդդիմությունը հրապուրեց դաշնակցականներին և մղեց նրանց համագործակցության։ 1898 թ. «Դրոշակը» գրում էր, որ այժմ, երբ օսմանցիներն արթնացել են քնից և կամենում են ընթանալ հեղափոխական ճամփով, «մենք կընդունենք մեզ պարզած ձեռքը... և բարոյական իրավունք չունենք մերժելու, երբ ձեռքն այդ մեկնվում է անկեղծորեն, երբ մեկնողը խոստովանում է հանցանքները և ձգտում է նրանց քավելու։ Սպասում ենք, որ օսմանյան հեղափոխական կուսակցության խոսքին շուտով կհետևի գործը»[17]։ Գայթակղվելով երիտթուրքերի խոստումներով, դաշնակցականները հույս հայտնեցին, որ մոտ ապագայում իրենք նրանց հետ միասին կգործեն, «մի ծրագրով, մի դրոշի տակ... և չենք կարծում, թե պիտի հուսախաբվինք...»[18]։

Սակայն չանցած մեկ տարի՝ 1899 թ. դաշնակցականները հիասթափվեցին երիտթուրքերից, հայտարարելով, որ նրանք «երբեք անմիջական կռվի ասպարեզ անցնելու տրամադրություն չեն արտահայտում»[19]։ Պարզվեց, որ

15 Դրոշակ, 1899, № 5, էջ 77։

16 Архив внешней политики России, ф. Политархив, 1898, д. 3451, л. 70.

17 Դրոշակ, 1898, № 6, էջ 59։

18 Նույն տեղում։

19 Նույն տեղում, 1899, № 2, էջ 19։

կողմերի միջև կան լուրջ տարաձայնություններ։ Երիտթուրքերն ուզում էին Թուրքիան վերակառուցել խիստ կենտրոնացված սկզբունքներով և ոչ թուրքերին տեսնել թուրքացած, իսկ դաշնակցականները, մերժելով այդ, առաջ էին քաշում ազգությունների ֆեդերացիայի գաղափարը։ Դաշնակցականները պահանջում էին իրագործել Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը, 1895 թ. մայիսի 11-ի նախագիծը և այդպիսով բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում. մինչդեռ, երիտթուրքերը դեմ էին դրան և հայտարարում էին, որ բարենորոգումներ պետք է անցկացնել կայսրության բոլոր մասերում։ Դաշնակցականները կարծում էին, որ համիդյան վարչակարգի դեմ պետք է վարել գործուն պայքար և այն տապալել զինված ապստամբության կամ հեղափոխության միջոցով, իսկ երիտթուրքերը վարում էին պասսիվ պայքար և հեղափոխության փոխարեն առաջ էին քաշում ընդհանուր բարենորոգումների հարցը։

Կողմերի այդ տարաձայնությունների պահին քաղաքական ասպարեզ եկան երիտթուրքական այլ գործիչներ՝ Մեհմեդ Սաբահեդդինը և Լյուտֆուլլահ եղբայրները, որոնք 1901 թ. իրենց հրապարակած գրքույկներից մեկում թուրքերին կոչ էին անում [illegible] համիդյան բռնապետության դեմ, իսկ ոչ թուրք օսմանահպատակներին համոզում էին խուսափել նեղ ազգային խնդիրներից և, միանալով թուրքերին, պահանջել 1876 թ. սահմանադրության կենսագործում։ Միաժամանակ նրանք առաջ էին քաշում օսմանյան կայսրության ապակենտրոնացված վերակառուցման թեզը, որը դաշնակցականները մոտ համարեցին իրենց ֆեդերացիայի ծրագրին։ Եղբայրների ապակենտրոնացման դրույթը մեղմեց երիտթուրքերի ու դաշնակցականների հակասությունները և որոշ պայմաններ ստեղծեց նրանց մերձեցման համար։ Եվ երբ երիտթուրքերն իրենց առաջին կոնգրեսին, ի թիվս այլ ընդդիմադիր ուժերի, հրավիրեցին նաև դաշնակցականներին, վերջիններս ընդունեցին նրանց հրավերը և ուղարկեցին իրենց ներկայացուցչին։ Կոնգրեսը բացվեց Փարիզում՝ 1902 թ. փետրվարի 4-ին և ավարտվեց փետրվարի 9-ին։ Այն ընթացավ տաք վիճաբանություններով ու թեև ընդունեց որոշումներ[20], բայց դրանք չբավարարեցին ո՛չ դաշնակցության պատվիրակներին, որոնք պահանջում էին լուծել Հայկական հարցը եվրոպական տերությունների միջամտությամբ և ստեղծել հայկական ինքնավարություն, և ոչ էլ Ահմեդ Ռիզային ու նրա համախոհներին, որոնք մերժում էին մեծ տերությունների միջամտությունը, ազգությունների ինքնավարությունը և երազում էին ստեղծել ուժեղ, կենտրոնացված օսմանյան սահմանադրական միապետություն։ Կողմերը կոնգրեսից հեռացան՝ չգալով միասնական եզրակացության։

1905 թ. ռուսաստանյան հեղափոխությունը իր ազդեցությունը թողեց Թուրքիայի վրա։ Տեսնելով, որ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան համախմբում է տարբեր ազգությունների ու գրոհի տանում ինքնակալության դեմ, երիտթուրքերն ավելի վճռական քայլեր կատարեցին կայսրության ընդդիմադիր ուժերն իրենց շուրջը հավաքելու ուղղությամբ։ 1907 թ. փետրվարի 15-ին երիտթուրքերը հրապարակեցին «Հայ ժողովրդին» վերնագրով հատուկ կոչ, որով հայերին առաջարկում էին թուրքերի ու այլ ազգությունների հետ միանալով դուրս գալ բռնապետության դեմ։ Կոչն ավարտվում էր. «Թուրքիան Թուրքիո ժողովուրդներուն միացրած ուժովը կազատվի և անով միայն կազատվի»[21] խոսքերով։ Դաշնակցությունն արձագանքեց այդ կոչին։ Ինչո՞ւ։ Ինչո՞ւ նա թողեց եվրոպական կողմնորոշումը և շուռ եկավ դեպի թուրքականը։ Կուսակցության պարբերականներից մեկը 1907 թ. այդ առթիվ գրում էր. «Անցյալի դառն փորձերը բերին մեզ այն եզրակացության, որ այն կերպ,

---

20 Դրոշակ, 1902, № 2, էջ 23—25, Ю. А. Петросян, Младотурецкое движение (вторая половина XIX—начало XX вв.). М., 1971, с. 206—208.

21 Լուսաբեր, 1907, № 340։

ինչ կերպով տարածված էր մինչև հիմա թուրքահայ հեղափոխությունը, այսինքն՝ պարտիզանական, հայդուկային արշավանքները, առանձին ազգային շարժում, բացի աննշան օգուտները, տվել են բացասական արդյունք։ Այն խարիսխը, որու վրա հիմնված կմղվեին այդ շարժումները—եվրոպական միջամտություն—ցույց տվավ իր զազրելի կամավոր սնանկությունը և մենք ստիպված ենք ձեռք վերցնել այդ անցյալենն»[22]։ Ապա դաշնակցությունն իր քաղաքական կողմնորոշման փոփոխությունը բացատրում էր նրանով, որ երիտթուրքերն իրր թողնում են իրենց ռեֆորմիստական գործելակերպը և անցնում հեղափոխականի։

Կուսակցության այդ կողմնորոշման փոփոխությունն ավելի կատարյալ արտահայտվեց 1907 թ. մայիսին կայացած IV համագումարի որոշումներում, ուր ասվում էր. «համերաշխություն հակակառավարական ցույցերի ժամանակ, շաղկապումն ըմբոստացող ուժերի՝ առանց կրոնի և ազգերի խտրության, միացած, միջազգային հողի վրա դրած պահանջներ, գործադուլներ բոլոր ազգերի պատկանող բանվորների, գյուղացիական միություններ տարբեր կրոններին պատկանող համայնքների միջև և ուրիշ շատ ձեռնարկումներ—ահա համերաշխ գործակցության արտահայտություններ, որոնց համար կուսակցությունը չի խնայելու ո՛չ կենդանի ուժեր, ո՛չ դրամ, և ոչ պրոպագանդա։ Հալածվածներ բոլոր ազգերի, միացեք—ահա նշանաբանը։ Սեպարատիստական ոչ մի ձգտում, ոչ մի գավ համերաշխության դեմ—ահա ընդհանուր ժողովի անկեղծ և ընդգծված հայեցակետը»[23]։

Արձանագրելով, որ երիտթուրքերը ռեֆորմիզմի փոխարեն արդեն պրոպագանդում են զանգվածային հեղափոխական շարժում, թղթի քարոզներից անցել են կենդանի գործի, անջատ ու մեկուսացված գործողություններից՝ համընդհանուր գործողությունների, դաշնակցության համագումարը որոշեց առաջիկայում հրավիրել Թուրքիայի դժգոհ տարրերի համաժողով և լուծել նրանց միավորման հարցը։ Միաժամանակ հայտարարում էր, որ ինքը «Թուրքիոյ մեջ ունեցած չէ և չունի անջատական ոչ մեկ ձգտում, այլ իր նպատակն է եղած ազգերու կատարյալ հավասարության և տեղական լայն ինքնավարության սկզբունքի համաձայն՝ հայկական վեց վիլայեթներու մեջ վարչական ինքնավարության հաստատումը, ինչ-որ չհակասեր մյուս ազգերի իրավունքին»[24]։

Համագումարից հետո դաշնակցությունն ավելի ակտիվ շարունակեց պրոպագանդել հայ-թուրքական համագործակցության անհրաժեշտությունը։ Նա հայտարարում էր, որ պետք է պոկենք մեր սրտերից ու մտքից անվստահության նախապաշարմունքները, դեն շպրտենք անցյալի անցանկալի հարաբերությունները, ձեռք տանք արթնացող հարևանին ու, պինդ գրկելով համերաշխության ավետարանը, որ քարոզել ենք 17 տարուց ի վեր, «դարձնենք հայ-մահմեդական գործակցությունը մեր շարժման անհրաժեշտ նշանաբանը»[25]։ Կուսակցության պաշտոնաթերթը հայտարարում էր, որ նոր դարաշրջան է սկսվում Օսմանյան կայսրության պատմության մեջ, որ «հեռու չէ այն օրը, ուր սուլթանի բռնակալությունը տեղի պիտի տա զարթնած ժողովուրդներու միացած գրոհին»[26]։ Ըստ «Դրոշակի», Աբդուլ Համիդն իզուր է ձգտում իրար հակադրել հայերին ու թուրքերին, քանի որ նրանց լավագույն ներկայացուցիչներն «ուխտել են անսահման համերաշխություն... և հուսով են, որ հայ-տաճկական զինակցությունը կստանա շուտով իր գերագույն սրբագործումը ազատագրական կռվի դաշտում»[27]։

22 ժամանակ, 1907, № 56, տե՛ս նաև Երկրի ձայն, 1907, № 11, էջ 11։

23 Դրոշակ, 1907, № 5, էջ 67։

24 Նույն տեղում, էջ 72։

25 Նույն տեղում, № 6—7, էջ 82։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում, № 10, էջ 143։

Շուտով դաշնակցականներն ու երիտթուրքերն անցան պրակտիկ գործի։ Նրանք սկսեցին Արևմտյան Հայաստանում կազմակերպչական աշխատանքներ տանել հայերի ու մահմեդականների մեջ, հիմնեցին կոմիտեներ, հրատարակեցին խմորատիպ ու ձեռագիր թերթեր, տարածեցին հակասուլթանական թռուցիկներ ու գրքույկներ, իրենց պաշտոնական հրատարակությունները, ծրագրերն ու այլ փաստաթղթերը։ Երիտթուրքերն ու դաշնակցականները քննադատում էին սուլթանական կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը, քարոզում էին ազգերի համերաշխություն, նրանց համատեղ ըմբոստացում և բռնապետության տապալում։ Նրանց թռուցիկներից մեկում ասվում էր, որ Աբդուլ Համիդի կառավարությունը որքան էլ լարում է ազգամիջյան հարաբերությունները, սաստկացնում հայերի հալածանքները, չի կարող խեղդել կամ կասեցնել ազատագրական պայքարը։ Արդեն թուրքերն էլ են հասկացել բռնակալության նենգ վարքագիծը, որը քայքայում ու բարոյալքում է նաև իրենց։ Ուստի համագործակցության ձեռք են մեկնում հայերին։ Թռուցիկի վերջում ասվում էր. «Թող կորչի բռնապետությունը։ Կեցցե՜ օսմանյան բոլոր ժողովուրդների ու ազգերի սերտ միությունը։ Կեցցե՜ սահմանադիր ժողովը»[28]։

Թուրքիայի ընդդիմադիր ուժերի կոնգրեսը բացվեց Փարիզում՝ 1907 թ. դեկտեմբերի 27-ին։ Մասնակցում էին 17 թուրք, 5 հայ և այլ ազգությունների ներկայացուցիչներ։ Հայերից չորսը դաշնակցական էին, իսկ մեկը՝ «Արմենիա» թերթի խմբագրության պատվիրակն էր։ Նախագահեցին երիտթուրքերից Ահմեդ Ռիզա բեյն ու Մեհմեդ Սաբահեդդինը, իսկ դաշնակցականներից՝ խաչատուր Մալոմյանը (Ակնունին)։ Կոնգրեսի աշխատանքներն ընթացան սուր տարաձայնություններով։ Ահմեդ Ռիզան պահանջում էր ճանաչել սուլթանի ու խալիֆի գոյությունը՝ որպես օսմանյան պետության գլուխ, որը դաշնակցականները կտրականապես մերժում էին։ Կողմերը չզիջեցին միմյանց և հարցը մնաց բաց։ Անլուծելի մնացին նաև այլ խնդիրներ։ Այնուամենայնիվ, 1907 թ. դեկտեմբերի 29-ին կոնգրեսն ավարտեց իր աշխատանքները և ընդունեց հռչակագիր, որի մեջ ասվում էր, թե Աբդուլ Համիդն իր կառավարման ամբողջ ժամանակամիջոցում հալածում ու հետապնդում է թե՛ քրիստոնյաներին և թե մահմեդականներին, դատապարտում է նրանց աղքատության ու ֆիզիկական բնաջնջման։ Նրա ավերիչ կառավարման հետևանքով կայսրությունը քայքայվում է, իսկ բնակչությունն արտագաղթում։ Եթե սուլթանի ռեժիմը հարատևի, երկիրը լիակատար կկործանվի։ Այդ գործընթացը կանխելու համար անհրաժեշտ է դիմել վճռական միջոցների, այն է՝ տապալել Աբդուլ Համիդին, արմատապես փոխել տիրապետող կարգերը և հաստատել խորհրդարան։ Դրա համար պետք է զինված դիմադրել իշխանություններին, հայտարարել գործադուլներ, հրաժարվել հարկերի վճարումներից, բանակում պրոպագանդել հակահամիդյան քաղաքականություն և կոչ անել զինվորներին, որ դուրս չգան բնակչության ու հեղափոխականների դեմ, բարձրացնել համընդհանուր ապստամբություն, երկրում գործող կազմակերպությունների ներկայացուցիչներից ստեղծել խառն կոմիտեներ, օսմանահպատակ ազգությունների լեզուներով հրատարակել հեղափոխական գրականություն և զարկ տալ հակակառավարական պրոպագանդին[29]։ Կոնգրեսի մասնակիցները հայտարարում էին. «Մենք կմիանանք ընդհանուր պայքարի մը համար, հարգելով միանգամայն յուրաքանչյուր կազմակերպության ինքնավարությունը, կմիանանք անկեղծորեն, եղբայրորեն և նախքան կռիվ սկսելը՝ խոստում կուտանք չի թուլանալ ու կհայտարարենք սուլթանին՝ թե մեր զենքերը վար չենք դներ, մինչև որ Թուրքիո համար նոր դարագլուխ մը

---

28 Նույն տեղում, № 9, էջ 130։

29 Նույն տեղում, 1908, № 1, էջ 3։

չբանանք»[30]։ Հռչակագիրը ստորագրել էին Թուրքիայի բախտով շահագրգռված շուրջ տասը կոմիտեների ու խմբագրությունների ներկայացուցիչներ։

Արդյո՞ք ճիշտ վարվեց դաշնակցությունը, որը համագործակցեց երիտթուրքերի հետ և իր ստորագրությունը դրեց այդ հռչակագրի տակ։ Խորհրդահայ պատմաբաններից շատերը նրա այդ քայլը համարում են սխալ ու դատապարտում են։ Սեզ թվում է, որ երիտթուրքերի հետ դաշնակցության այդ համագործակցությունը պիտի ճիշտ համարել, քանզի երիտասարդ թուրքերն այսպես թե այնպես Աբդուլ Համիդի դեմ պետք է հաղթանակ տանեին։ Նրանք բռնակալին տապալեցին զորքի, բայց ոչ բնավ ժողովրդական լայն զանգվածների միջոցով։ Եթե դաշնակցականները չմիանային նրանց, մեղադրվելու էին սեպարատիզմի ու դավաճանության մեջ։ Նորելուկ կառավարիչները դրանով պետք է արդարացնեին իրենց հակահայկական վարքագիծը։ Ընդհակառակը՝ դաշնակցականները միանալով երիտթուրքերին, նրանց զրկում էին այդ հիմքից և քաղաքական ու բարոյական իրավունքներ էին ձեռք բերում՝ ներկայացնելու իրենց ազգային պահանջները։

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո դաշնակցությունը հրաժարվեց եվրոպական կողմնորոշումից և Հայկական հարցի լուծումը կապեց իթթիհատի հետ։ Նա հայտարարում էր, որ Հայկական հարցը, եթե մինչ այդ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա էր, ապա այժմ դառնում է Թուրքիայի ներքին խնդիր։ Ուստի նրա լուծումը պետք է սպասել ոչ թե մեծ տերություններից, այլ համաօսմանյան խորհրդարանից։ Կուսակցությունը նշում էր, որ ինքը չունի անջատողական «սին ծրագիր» և գտնում է, որ Հայկական հարցի լուծման ամենաճիշտ եղանակը վարչական ապակենտրոնացման ստեղծումն է։ «Միմիայն վարչական ապակենտրոնացման և կուլտուրական ինքնօրինության սիստեմի մեջ,—գրում էր «Դրոշակը»,—հայ ժողովուրդը հնարավորություն կունենա ազատորեն, առանց վերուստ տեղացող ճնշումների զարգացնել իր ազգային քաղաքականությունը, ապահովել իր ուրույն անհատականությունը, իր տնտեսական-սոցիալական բարօրությունը»[31]։ Դրա հետ դաշնակցությունը խնդիր էր դնում, որ օսմանյան պետությունը, պահպանելով իր ամբողջականությունն ու միությունը, «թույլ տա առանձին շրջանների կառավարելու՝ համաձայն իրենց հատուկ կարիքների ու պայմանների։ Եվ անհրաժեշտ է սահմանել վարչական նոր կազմակերպություն՝ ազգագրական (էթնոգրաֆիկ) խարիսխի վրա»[32]։ Դժվար չէ կռահել, որ կուսակցությունը չէր բավարարվում ապակենտրոնացումով, խնդիր էր դնում ազգային ի քավարություն կամ հայկական ինքնավարություն ստեղծել։

Դաշնակցությունն իր մտերմությունը երիտթուրքերի հետ շարունակեց նույնիսկ սուլթանի ու իթթիհատի կազմակերպած Ագանայի հայոց կոտորածներից հետո։ 1909 թ. օգոստոսին երկու կուսակցությունները կնքեցին համաձայնագիր, որի մեջ ասվում էր, թե հայրենիքի աղատությունն ու տարածքային ամբողջականությունը պահպանելու, ինչպես և Օսմանյան կայսրությունում ապրողների միջև լավագույն հարաբերություններ հաստատելու համար իթթիհատն ու դաշնակցությունը պարտավորվում են կենսագործել սահմանադրությունը, հակահարված տալ հետադիմական տարրերին, ցրել «բրոնակալ ռեժիմն ժառանգ մնացած այն սուտ զրույցները, թե հայերը անկախության կձգտին»[33]։ Ապա նրանք հայտարարում էին, որ երկու կուսակցությունները, ղեկավով իրենց վրա ընկած պատասխանատվության ամբողջ

---

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում, էջ 115։

32 Նույն տեղում։

33 Աղատամարտ, 1909, № 63։

ծանլությունը, «կկանգնեն կողք-կողքի, խոսք կուտան միասին աշխատել, միասին պայքարել և միասին ճակատ տալ քաղաքական փորձությանց»[34]։ Այդպիսով, դաշնակցականներն արեցին ավելին, քան պետք էր։ Նրանք կուլ տվեցին Ադանայի դառնությունները՝ հանուն օսմանյան ժողովուրդների, այդ թվում հայերի, խաղաղ ու կուլտուրական զարգացման և առաջադիմության։ Բայց երիտթուրքերը, հավատարիմ մնալով իրենց շովինիստական քաղաքականությանը, շարունակեցին հակահայկական գիծը, խաղաղ բնակչության նկատմամբ գործադրելով ամենավայրագ դաժանություններ։

Շուտով դաշնակցությունը երես դարձրեց նրանցից և Հայկական հարցի լուծումը կապեց Ռուսաստանի հետ։ Դա կատարվեց այն բանի հետևանքով, որ ցարիզմը, պատերազմի նախապատրաստվելով Թուրքիայի դեմ, որոշեց օգտագործել հայերին։ Ուստի փոխեց իր վերաբերմունքը նրանց հանդեպ և, դադարեցնելով հայկական հալածանքները, Թուրքիայից պահանջեց բարեփոխումներ մտցնել Արևմտյան Հայաստանում։ Դաշնակցությունը պաշտպանեց Թիֆլիսի հայության ձեռնարկումը, որը 1912 թ. աշնանը պատգամավորություն ուղարկեց Էջմիածնի կաթողիկոսի մոտ, խնդրելով Հայկական հարցը բարձրացնել Կովկասի փոխարքայության և, վերջին հաշվով, ինքնակալության առաջ։ Դաշնակցականները նշում էին, թե կաթողիկոսը կարող է լիովին վստահ լինել, որ նրա այդ քայլը «համակրանք մեկայն կհարուցանե մեր սահմաններուն և երախտագիտության զգացումներ՝ տաճկահայոց սրտերում»[35]։ Նրանք նույնիսկ նախագծում էին Հայկական հարցի լուծման եղանակները, նշելով, թե այն կարող է ունենալ երեք վճիռ՝ բոլորն էլ կապված Ռուսաստանի հետ։ Առաջին. եթե Թուրքիան մասնատվի, ապա Հայկական բարձրավանդակը, լինելով Ռուսաստանին սահմանակից, կանցնի նրա ձեռքը։ Երկրորդ՝ եթե հաստատվի միջազգային հսկողություն Թուրքիայի վրա, ապա հայաբնակ նահանգները նույն պատճառով կանցնեն Ռուսաստանի հսկողության տակ։ Երրորդ՝ եթե հայերին տրվի ինքնավարություն, նրա հովանավորությունը դարձյալ կտրվի Ռուսաստանին։ «Այդպիսով,—եզրափակում էր «Հորիզոնը»,—ինչպես անցյալում, այնպես էլ ներկայում Թուրքահայ ժողովրդի բախտը կապված է Ռուսաստանի հետ»[36]։ Ելնելով այդ ամենից, թերթն արևելահայերին հորդորում է դիմել ցարին, որ Հայկական հարցը ներկայացնի մեծ տերությունների առաջիկա վեհաժողովին։ Սակայն կուսակցությունը միաժամանակ հարկ էր համարում նշել, որ Հայկական հարցի լուծումը միայն Ռուսաստանից չի կախված, այլ նաև եվրոպական պետություններից։ Ուստի արևելահայերը, թույլտվություն վերցնելով ռուսական կառավարությունից, պետք է դիմեն նաև Բեռլինի դաշնագիրը ստորագրած մյուս պետություններին, խնդրելով, որ նրանք աջակցեն իրենց հայրենակիցների հարցի արդար լուծմանը։ Ամփոփելով այդ ամենը, դաշնակցության պարբերականը գրում էր. «Հայերի պահանջը տարրական բան է. կյանքի, գույքի և պատվի ապահովություն և կուլտուրական զարգացման հնարավորություն։ Թե ինչ քաղաքական ձև կստանա այս պահանջների իրագործումը՝ այդ մեզանից կախված չէ։ Մեզանից կախված է միմիայն մի բան. խնդրել այդ ամենը մեր արյունակից եղբայրների համար՝ նախ Ռուսաստանից, իբրև ռուս քաղաքացի, ապա նրա թույլտվությամբ՝ Եվրոպայից, իբրև մի ազգ, որի կեսը տառապում է դարերով անհնարին նեղության մեջ»[37]։ Բայց 1913 թ. սկզբին կուսակցությունն արդեն չէր սահմանափակվում այդ պահանջներով։ Նա հիմա առաջ էր քաշում Ռուսաստանի հովանավորությամբ ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարը, գտնելով, որ դա ձեռնտ-

---

34 Նույն տեղում։

35 Հորիզոն, 1912, № 206։

36 Նույն տեղում, № 259։

37 Նույն տեղում, № 260։

կլինի նաև Ռուսաստանին, որովհետև այդ Հայաստանն իր գոյությամբ պարտական լինելով Ռուսաստանին, նրա հետ կապված կմնա անխզելի կապերով և կծառայի որպես սահմանակից պետություններին դեմ հենակետ։

Որքան Հայկական հարցը թեակոխում էր իր քննարկման բուռն շրջանը, այնքան դաշնակցությունը հավատալով, որ այն դրական կլուծվի, հեռանում էր իթթիհատից, հանդես գալով նրա դեմ։ 1913 թ. օգոստոսի 17-ին հրավիրված կուսակցության VII համագումարից հետո «Դրոշակն» իր առաջնորդողում գրում էր. «ցրենք վերջապես մահաբեր պատրանքը։ Ժամանակն է նողկանքով երես դարձնենք թուրք պաշտոնական շողոքորթ ժպիտներից, որոնք ամենավտանգավոր դավեր են եղել մեր ժողովրդի գոյության դեմ»[38]։ Ապա թերթը նշում էր, որ երիտասարդ թուրքերի կառավարությունն «այս չորս տարում հայ ժողովրդի արյունը ծծեց վամպիրի պես, նրա անդարձ կորուստյան վիհը փորեց և մենք՝ ազնվորեն դյուրահավատներ, պատրանքներով աչքերնիս շլացած՝ անզգալիորեն քայլ առ քայլ դեպի այդ ճակատագրական անդունդը դիմեցինք։ Ցրենք, վերջապես, այդ մահաբեր պատրանքը։ Զգաբենք մեզ և չխաբվենք ուրիշներից»[39]։ Դաշնակցությունը հայտարարում էր երիտթուրքերին. «Չենք հավատում ձեզ, չենք կարող այսուհետև ձեզ վստահել հայ ժողովրդի ապագան և նրա փրկությունը փնտրելու ենք միմիայն Եվրոպային խոստացած իրական երաշխիքների մեջ»[40]։

Բայց բավարարե՞ց նրան Եվրոպան, այդ կուսակցությունը գոհ մնա՞ց մեծ տերությունների կողմից 1914 թ. հունվարի 26-ին հաստատված բարենորոգումների նախագծից։ «Հորիզոնի» խմբագրությունը քանի դեռ չէր ստացել այդ նախագիծը, ռուսական պաշտոնական հաղորդումների հիման վրա այն գնահատում էր իր բացասական ու դրական կողմերով և ապա եզրակացնում, որ նախագիծը «կարող է ստանալ այնպիսի պայմաններ, որոնք անխուսափելիորեն և ոչ շատ հեռավոր ապագայում կտանեն դեպի (Հայոց հարցի) լուծումը»[41]։ Սակայն երբ ստացավ բարենորոգումների ծրագիրը, հիասթափվեց և արձանագրեց, որ «Հայկական բարենորոգմանց պահանջներն այնպես, ինչպես նրանք ձևակերպված են հունվարի 26-ի ռուս-տաճկական համաձայնության մեջ, ստեղծում են մեզ համար վերին աստիճանի անհաստատ դրություն։ Ոչ մի միջազգային երաշխիք չկա, որ ընդգծված պահանջները իրագործվելու են, հետևաբար և ոչ մի հիմք մեզ համար հայկական խնդիրը հենց թեկուզ անցողական ստադիայի համար լուծված նկատելու»[42]։ Դաշնակցությունը բարենորոգումների ձախողման պատճառը տեսնում էր Գերմանիայի իմպերիալիստական քաղաքականության մեջ։ 1914 թ. ապրիլին այն նշում էր. «Շատ համեստ ինքնավարության փոխարեն, հայկական ռեֆորմների ծրագիրը, շնորհիվ Գերմանիային, վերջնվերջո դարձավ իր ձևով անորոշ, անբովանդակ, հեղհեղուկ, գործնական հետևանքներով չափազանց առեղծվածային մի փորձ, որ բազմաթիվ փորձությունների աղբյուր է դառնում»[43]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Թուրքիան, նախապատրաստվելով պատերազմին, փորձեց դաշնակցությանը ծառայեցնել իր նպատակին։ 1914 թ. օգոստոսին իթթիհատի պարագլուխները Բեհաեդդին Շաքիրին ուղարկեցին Էրզրում, հանձնարարելով՝ հայերին, մասնավորապես նրանց քաղաքական կյանքում առաջնակարգ դեր խաղացող դաշնակցությունը, թեքել իրենց կողմը։ Ժամանելով Էրզրում, Բեհաեդդին Շաքիրը սկսեց

---

38 Նույն տեղում։

39 Դրոշակ, 1913, № 4, էջ 49։

40 Նույն տեղում, էջ 51։

41 Հորիզոն, 1914, № 27։

42 Նույն տեղում, 1914, № 35։

43 Դրոշակ, 1914, № 4, էջ 51։

բանակցել հայ երևելիների հետ, ձգտելով նրանց հավատացնել, որ Ռուսաստանը և նրա դաշնակիցները պատերազմի դեպքում չեն կարող դիմանալ Ծոյակ միությանը, մանավանդ, եթե Թուրքիան էլ հանդես գա նրանց դեմ։ Իթթիհատի ներկայացուցիչը հավաստիացնում էր, որ Թուրքիայի հետևից Անտանտի դեմ ոտքի կելնեն բոլոր մահմեդականները՝ սկսած Մարոկկոյից, վերջացրած Աֆղանստանով, Կովկասում նրանց կհետևեն նաև վրացիները։ Մեր հաջողությունը, շարունակում էր Բեհաեդդին Շաքիրը, ամբողջապես գտնվում է հայերի ձեռքում։ Եթե նրանք գլխավորեն հակառուսական շարժումը, մենք հակառակորդին կշպրտենք Կովկասյան լեռներից դեպի հյուսիս։ Այնուհետև՝ Թիֆլիսի, Քութայիսի, Բաթումի նահանգներից և Տրապիզոնի նահանգի մի մասից կստեղծենք ինքնավար Վրաստան, Բաքվի, Ելիզավետպոլի և Դաղստանի նահանգներից՝ ինքնավար մահմեդական մարզ, իսկ Երևանի, Կարսի նահանգներից, Ելիզավետպոլի նահանգի արևմտյան մասից՝ ինքնավար Հայաստան, նրան միացնելով նաև Էրզրումի, Վանի ու Բիթլիսի վիլայեթները[44]։

Հատկանալի է, որ իթթիհատական ներկայացուցիչն այդ առատ խոստումները տալիս էր ոչ թե հետագայում կենսագործելու, այլ հայերին ու Անդրկովկասի այլ ժողովուրդներին խաբելու համար։ Դաշնակցականները նրան պատասխանեցին, որ ռուս-թուրքական պատերազմի դեպքում իրենք լոյալ կլինեն իրենց պետությունների հանդեպ։ Ապա ավելացրին, որ Ռուսաստանի դեմ Թուրքիայի պատերազմը կլինի արկածախնդրություն, որը սպառնալիքի տակ կդնի Օսմանյան կայսրության գոյությունը։ Բեհաեդդին Շաքիրը դժգոհ մնաց այդ պատասխանից։

Պատերազմի նախօրյակին հայության մեջ եռանդուն գործունեություն ծավալեց նաև Ռուսաստանը։ Ցարական կառավարությունը, որը 1905 թ. հեղափոխության ու հատկապես ռեակցիայի տարիներին աքսոր էր քշել բազմաթիվ հայերի, մանավանդ դաշնակցականների, պատերազմի նախօրյակին ազատ արձակեց նրանց, խրախուսելով, որ օժանդակեն ռուսական զենքի հաղթանակին։ Կովկասի փոխարքան հայերին նույնիսկ ինքնավարություն խոստացավ։ Դաշնակցությունն ակտիվ արձագանքեց ցարական իշխանությունների կոչերին, հույս տածելով, որ պատերազմն իրական պայմաններ կստեղծի Հայկական հարցի լուծման համար։ Նա իր ձեռքը վերցրեց Հայ ազգային բյուրոն և ղեկավար դեր խաղաց կամավորական ջոկատների ստեղծման գործում։ Կուսակցությունը կարծում էր, որ այդ ջոկատների կազմավորումով հայ ժողովուրդն ակտիվ կմասնակցի պատերազմին և Անտանտի հաղթանակի դեպքում նրանից կպահանջի հայկական ինքնավարություն, դրա մեջ ընդգրկելով հայկական վեց վիլայեթներն ու Կիլիկիան։

Դաշնակցությունը Մոսկվայում, Պետրոգրադում, Նոր Նախիջևանում և Ռուսաստանի այլ քաղաքներում, ինչպես նաև արտասահմանում ուներ իր ներկայացուցիչները, որոնք կամավորներ էին հավաքագրում և ուղարկում Թիֆլիս։ Շուտով Թիֆլիսում այնքան շատ կամավորներ հավաքվեցին, որ կուսակցությունը ստիպված եղավ նրանց հոսքը դադարեցնել։

Հայ կամավորները Ռուսաստանի բանակը համալրում էին ոչ թե ցարիզմի զավթողական պլանների իրականացմանը նպաստելու, այլ ռուսների օգնությամբ Արևմտյան Հայաստանը Թուրքական լծից ազատագրելու համար։ Հայ կամավորներից սկզբում կազմվեցին 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, իսկ հետո՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ ջոկատները։ Ամենաբազմամարդն Անդրանիկի ջոկատն էր, որն ուներ 1200 զինվոր։ Հայ կամավորները ռուսական բանակների կազմում խիզախաբար կռվեցին Թուրքերի դեմ, նպաստելով ռուսների հաղթանակներին։ Բայց 1915 թ. վերջերին ցարիզմը, երկյուղելով, որ դրանք կարող են դառնալ ազգային զորքի հիմք, իր բանակների վերակառուցման պատրվա-

[44] Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов. Под ред. М. Г. Нерсисяна, Ереван, 1966, с. 296.

կով ցրեց։ Կառավարող ու զինվորական շրջանները բացեիբաց հայտարարեցին, որ իրենք հետամտում են իրենց պետական շահերը և ոչ թե հայերի ինքնավարության հաստատումը, որ հայերը պետք է կռվեն ոչ թե ինքնավար Հայաստանի համար, այլ որպես Ռուսաստանի քաղաքացիներ։ Ցարիզմի այդ վարքագիծը դառնացրեց հայ կամավորներին, որոնցից շատերը լքեցին ռուսական բանակը։

Ցարիզմի տապալումից հետո դաշնակցությունը կողմնորոշվեց դեպի ժամանակավոր կառավարությունը, հույս ունենալով, որ նրա միջոցով կլուծվի հայոց ազգային խնդիրները։ Բայց նրա այդ հույսերն էլ ի դերև ելան։

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե դաշնակցությունը Հայկական հարցի լուծման համար ի՞նչ վարքագիծ կամ գործելակերպ ուներ հարևան ժողովուրդների նկատմամբ։ Նախապես նշենք, որ այն իր 1892 թ. ծրագրում ուշադրություն էր դարձնում թուրքերի, քրդերի, ասորիների և այլոց հետ համագործակցության խնդրին և կարծում էր, որ, եթե հնարավոր լինի, կարելի է օգտագործել նրանց բռնապետության դեմ, իսկ եթե ոչ պետք է աշխատել «գոնե չեզոքացնել օտար տարրերի ընդդիմադրական ուժը»[45]։ 1890-ական թվականների հայկական կոտորածներից հետո դաշնակցությունը փորձեց մերձենալ քուրդ մտավորականներին, կամենալով նրանց միջոցով պրոպագանդել իր գաղափարները քրդերի մեջ։ Նրա այդ քայլը պաշտպանություն գտավ քուրդ մտավորականների կողմից, որոնք սկսեցին թղթակցել դաշնակցության պարբերականներին։ 1898—1900 թթ. «Դրոշակը» թարգմանաբար հրապարակեց քուրդ մտավորականների գրած և իրենց հայրենակիցներին ուղղած երկու կոչ, որոնցում խորհուրդ էր տրվում մերժել սուլթանի հակահայկական քաղաքականությունը և դաշնակցել հայերի հետ՝ հանուն երկու ժողովուրդների ազատության[46]։ «Դրոշակը» 1901 թ. հրապարակեց քրդերի մեջ ճանաչված Բեդերխան բեյի որդի Աբդուլրահմանի կոչը, որը մի կողմից աղաներից պահանջում էր վերջ տալ երկպառակություններին, հակահայկական գործողություններին և սուլթանին ծառայելուն, իսկ մյուս կողմից՝ հասարակ քրդերին ցույց էր տալիս, որ իրենց հուզող հարցերի լուծումը նրանք կարող են ձեռք բերել ոչ թե հայերի հետ թշնամանալով ու առճակատումով, այլ բարեկամությամբ ու դաշնակցությամբ[47]։ Այդ նյութերը ժնևից անլեգալ ճանապարհով ուղարկվեցին Թուրքիա և տարածվեցին Արևմտյան Հայաստանում, բայց քրդերի անգրագիտության, խավարի, Համիդի պառակտիչ գործուն ջանքերի և այլ գործոնների պատճառով շոշափելի արդյունքներ չտվեցին։

Դաշնակցականները գրավոր պրոպագանդից զատ փորձեցին նաև գործնական կապեր ստեղծել քրդերի հետ։ Նրանք ձգտում էին կապեր հաստատել ցեղապետերի ու աղաների հետ, ելնելով այն հանգամանքից, որ նրանց ազդեցության տակ են գտնվում գյուղացիները, և որ նրանց նեղությամբ կարող են ոտքի կանգնել քուրդ զանգվածները։ 1901 թ. «Դրոշակը» գրում էր, որ համոզել «մի ցեղապետի (էլ աղան, միր) կամ մի կրոնապետի (շեյխ)—դա միևնույնն է, թե համոզել նրա ամբողջ ցեղը, որն իր «կրոնավորական համաձայնության» մեջ գիտի միայն հնազանդվել իր իշխանավորին և կատարել նրա կամքը»[48]։ 1896 թ. Ռուբեն Շիշմանյանին (Քեռի) ուղարկեցին Դերսիմ, 1903 թ. Մալխասին՝ Շամդինան և այլն։ Մակայն քուրդ ցեղապետերը կամ սպանում էին դաշնակցության պատվիրակներին, կամ զանց էին առնում նրանց առաջարկությունները։ Քչերն էին միայն ունկնդրում նրանց, բայց սրանք քաղաքական շոշափելի ուժ չէին։

Դաշնակցականների ու քրդական վերնաշերտերի համագործակցության

---

45 Դրոշակ, 1894, № 10, էջ 2։

46 Նույն տեղում, 1898, № 6, էջ 52, 1900, № 1, էջ 6։

47 Նույն տեղում, 1901, № 4, էջ 67—68։

48 Նույն տեղում, № 5, էջ 81։

անհաջողությունը բացատրվում է նրանով, որ երկուսն էլ ուզում էին ստեղծել իրենց պետությունը կամ ինքնավարությունը նույն տարածքի վրա՝ Արևմտյան Հայաստանում։ Քուրդ ցեղապետերն ու աղաներն օսմանյան կառավարության հենակետերն էին Արևմտյան Հայաստանում, ունեին մեծամեծ հարստություններ, որոշակի դիրքեր ու ազդեցություն, օգտվում էին զանազան արտոնություններից և իրենց լիքը կուժը չէին խփի դաշնակցության դատարկ կուլայինն։ Քրդերի հետ դաշնակցականների համագործակցության անհաջողությունները բացատրվում էին նաև նրանով, որ քուրդ գյուղացիները տակավին չունեին դասակարգային գիտակցություն։ Որքան էլ նրանք հարստահարվում ու ճնշվում էին իրենց ցեղապետերի ու աղաների կողմից, այնուամենայնիվ, դեռ տառապում էին կրոնամոլությամբ, նրանց ձեռքին դառնում էին կույր գործիք՝ ընդդեմ քրիստոնյաների, հատկապես հայերի։

Դաշնակցությունն արևմտահայության ազատագրման համար իր հայացքը հառեց նաև միջազգային սոցիալ-դեմոկրատիային։ Այն իր 1892 թ. ծրագրում անընդունելի էր համարում նրա գաղափարների կենսագործումը Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում, քանի որ «Տաճկաստանը չունի բոլորովին գործարանական արդյունաբերություն և խոշոր ինդուստրիայի զարգացում...», իսկ «այն երկրում, ուր գերակշռում է երկրագործությունը և նահապետական կուլտուրան, խոսք չի կարող լինել Արևմտյան Եվրոպայի սոցիալիզմի մասին, ուր կուլտուրան անհամեմատ ավելի բարձր է և տիրապետում են խոշոր սոցիալական պայմանները»[49]։ Սակայն դաշնակցությունը նաև հույս ուներ, որ սոցիալիզմի գաղափարները կարող են երբևէ տարածում ու իրացում գտնել Արևմտյան Հայաստանում։ Նրա 1907 թ. ծրագրում ավելի որոշակի էր խոսվում այդ գաղափարների մասին։

Այնուամենայնիվ, դաշնակցականները XIX դարի վերջերից սկսած Հայկական հարցով դիմեցին միջազգային սոցիալ-դեմոկրատիային։ Նրանց դիմումը անպատասխան չմնաց։ 1900 թ. Երկրորդ ինտերնացիոնալի Փարիզի միջազգային կոնգրեսը կոնկրետ բանաձև ընդունեց, որով իր բողոքն ու զայրույթը հայտնեց սուլթանական Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրվող վայրագությունների դեմ և պառլամենտական սոցիալիստ խմբերից պահանջեց «միջամտել հօգուտ անարգաբար հարստահարված հայ ժողովրդի»[50]։ 1901 թ. սեպտեմբերին դաշնակցականները դիմեցին Բրյուսելի Միջազգային սոցիալիստական բյուրոյին, խնդրելով Եվրոպայի տերությունների առաջ հարց հարուցել, որ զբաղվեն հայոց խնդրով։ Նույն թվի հոկտեմբերի 15-ին այդ բյուրոն բոլոր երկրների բանվորական կուսակցություններին կոչ արեց պրոլետարական համերաշխություն ցուցաբերել հանուն հայ ժողովրդի պաշտպանության, այն ժողովրդի, որը տառապում և կռվում է «ապրելու իրավունք նվաճելու համար»[51]։ Բյուրոյի այդ կոչին արձագանքեցին մի շարք երկրների սոցիալիստական կուսակցություններ։

Դաշնակցականները Միջազգային սոցիալիստական բյուրոյին դիմեցին նաև հետագայում։ Նրանք նույնիսկ մտան Երկրորդ ինտերնացիոնալի մեջ (1907 թ. կուսակցության արևելյան կամ կովկասյան, իսկ 1909 թ.՝ արևմտյան կամ թուրքահայ հատվածները)։ Սակայն դաշնակցությունը կատարելով այդ քայլը, ուզում էր ոչ թե համերաշխել ինտերնացիոնալի նպատակներին և պայքարել դրանց կենսագործման համար, այլ նրա ամբիոնն օգտագործել հօգուտ Հայկական հարցի։ Մ. Վարանդյանն այդ առթիվ գրում էր. «Մտնելով միջազգային աշխատավորական մեծ ընտանիքի մեջ, հստակորեն գծելով իր ընկերվարական իդեալը, Հ. Հ. դաշնակցությունը այնուհետև ալ կշարունակեր մնալ խորապես ազգային կուսակցություն»[52]։ Եվ ապա շա-

49 Նույն տեղում, 1891, № 1, էջ 1։

50 Նույն տեղում, 1901, № 7, հավելված, էջ 2։

51 Նույն տեղում։

52 Մ. Վարանդյան, նշվ. աշխ., էջ 494։

բունակում էր. «Ինտերնացիոնալը ամբիոն մըն էր մեզի համար—քաղաքակիրթ աշխարհի բարձր ու հմայքոտ ամբիոններեն մեկը—ուակից կարծարծեինք մեր ազգային Դատը, ձգտելով շահագրգռել մեծ երկրներու ընկերվարական պարագլուխները հայ ժողովուրդին ճակատագրով։ Այդ նպատակին կծառայեին մեր բոլոր տեղեկագիրները ու բանվորական զեկույցները, որ 1896 թվականեն ի վեր կներկայացնեին այդ միջազգային ատյանին[53]։ Այնուհետև հեղինակը եզրափակում է, որ մտնելով ինտերնացիոնալի մեջ, «ունենք գացեր լուծելու միջազգային աշխատավորության կնճռոտ խնդիրները... գացեր ենք մեր սեփական ցավերը հոգալու, մեզի վրա ուշադրություն հրավիրելու և օգնություն խնդրելու[54]։

Այսպիսով, դաշնակցությունը, կանգնելով արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի ավանգարդում, իրեն հռչակեց համազգային կուսակցություն և փորձեց համախմբել ազգի բոլոր ուժերը և դրանք ծառայեցնել ընդհանուր նպատակին։ Բայց տեսնելով, որ արևմտահայությունը սեփական ուժերով անկարող է ազատագրվել, սկսեց նրա փրկության ելքը որոնել գրսաշխարհում։ Նա մերթ դիմում էր արևմտահայության բախտն իրենց ձեռքը վերցրած եվրոպական տերություններին, մերթ դառնանալով նրանցից՝ միջազգային առաջադեմ հասարակությանը, մերթ Աբդուլ Համիդի դեմ պայքարող երիտթուրքերին, մերթ փորձում էր համագործակցության եզրեր դրտնել արևմտահայերի հարևանների, գերազանցապես քրդերի հետ։ Կուսակցության այդ դեգերումները, ոչ թե դատապարտելի են, այլ արժեքավոր, քանզի գործնականում ապացուցեցին, որ անհնար էր արևմտահայության ազատագրությունը գրսից։ Իր գործունեության ընթացքում դաշնակցությունը, անշուշտ, թույլ է տվել սխալներ։ Բայց ո՞ր կուսակցությունն է գործել միայն ճիշտ ու անշեղ։

Հայ լենինյանները, քննադատելով դաշնակցության քաղաքական կողմնորոշումները, մերժում էին դրանք և արևմտահայության փրկության բախտը, ղեկավարվելով Ֆ. Էնգելսի հանրահայտ գրույթով, կապում էին ցարիզմի տապալման ու ռուս պրոլետարիատի հեղափոխության հաղթանակի հետ։ Սակայն պատմությունն ապացուցեց, որ նրանք նույնպես սխալվել են, քանզի Ռուսաստանում ցարիզմը տապալվեց, ռուս պրոլետարիատը հաղթանակեց, իշխանության գլուխ անցան մարքսիստները, բայց Արևմտյան Հայաստանը չազատագրվեց, բոլշևիկների համաձայնությամբ դարձավ թուրքական հող, իսկ արևմտահայությունը ջարդվեց ու ցրվեց, ապաստանելով աշխարհի տարբեր երկրներում։ Այդուհանդերձ հայ բոլշևիկների փորձից նույնպես պետք է դասեր քաղել։

К ПОЛИТИЧЕСКОЙ ОРИЕНТАЦИИ АРМЯНСКОЙ РЕВОЛЮЦИОННОЙ ПАРТИИ ДАШНАКЦУТЮН (1890—1917)

А. С. АМБАРЯН

Резюме

Дашнакская партия с первого же дня своего создания заявила, что путем восстания должна добиться освобождения и независимости западных армян. Но поняв, что собственными силами сделать это невозможно, она обращалась то к помощи великих европейских держав то связывала надежды с младотурками, то пыталась сотрудничать с курдами в Западной Армении, то уповала на русский царизм. Однако все это оказалось тщетным. Тем не менее дашнакцутюн своей деятельностью обогатили опыт освободительной борьбы армянского народа.

53 Նույն տեղում, էջ 498։

54 Նույն տեղում, էջ 499։